

Թեանց մէջ վատահելի մարդոց դերը կը կատարէին, և կը գտնուէին կարեւոր պաշտօններու գլուխ, ինչ որ ապացոյց մըն էր այլամերժ և օտարատեաց Եթովպիոյ մէջ Հայերու վայելած բացառիկ վատահելեան և համակրանքին: Այսպէս՝ Եսոս Թագաւորին օրով արքունիքին մէջ կարեւոր դիրք կը գրաւէր հալէպցի Մուրատ անուն հայ վաճառականը, որ պաշտօն ունէր Թագաւորին ապրանքները ծախելու Հնդկաստանի և Ծայր. Արեւելքի մէջ:

Մուրատ, ամէն տարի իբր դեսպան Եթովպիոյ Թագաւորին, կը տանէր նուէրներ Արեւելեան Հնդկաստանի ընկերութեան անգլիացի և հոլանտացի պարօններուն, և կը բերէր անոնց նուէրները Եթովպիոյ Թագաւորին:

1655ին Մեքայի մէջ հանդիպելով Ֆրանսացի բժիշկ Ֆրանսուա Պէրնիէի, Մուրատ անոր տուած էր դիւրութիւններ և զգուշացուցած զայն Հապէշիստան այցելել, ինչպէս յիշեցի: Հինգ վեց տարի վերջը անոնք իրարու պատահեցան Տէլհիի մէջ, ուր Մուրատ գացած էր հապէշ կայսեր կողմէ դեսպան Մեծ Մոնկոլին մօտ:

Ֆրանսուա Պէրնիէ, որ հոն էր, այս դեսպանութեան վրայ կու տայ բաւական մանրամասն տեղեկութիւններ (Thomas Osborneի հրատարակած A. Collection of Voyage and Traveles, London. 1745, II. էջ 144—148 կամ Յ. Քիւրտեան, Հայրենիք ամսագիր, ԺԸ. տարի, Թ. 12 էջ 160—165):

Եսոս Թագաւոր (1), որ Եթովպիոյ բարե-

---

(1) Անէ-Էսսու, որուն մայրաքաղաքն էր Սէնուր, 1698ին Եւրոպացիներուն հետ յարաբերութեան մեծ է առաջին անգամ (Արփիդար. Յուսաբեր, 1930 Մարտ 18):